ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«10» 08 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 65

Ձեռնարկողը՝ ***<<ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ>> ՍՊԸ***
Ք. Երևան, Քանաքեռ 13փ., 21տ.

Գործունեությունը՝ ***Նոր Նորք վարչական շրջանի Արտ. Միկոյան 18/2 հասցեում նախատեսվող հասարակական շինությունների կառուցման և գոյություն ունեցող շինությունների վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝ Ռ. Ոսկանյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 65

«10» 08 2018թ.

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջան Արտ. Միկոյան 18/2 հասցեում նախատեսվող հասարակական շինությունների կառուցման և գոյություն ունեցող շինությունների վերակառուցման նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	<<ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ>> ՍՊԸ
Նախագծող՝	<<Օհանյան ինդասթրիզ>> ՍՊԸ Ա/Ձ Ա. Գալոյան
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ;
Տեղադրման վայրը՝	Նոր Նորք վարչական շրջան
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի <<Կամ դեվելոփմենթս>> ՍՊ ընկերությունը նախատեսում է իրականացնել Նոր Նորք վարչական շրջան Միկոյան 18/2 հասցեում գոյություն ունեցող շինությունների վերակառուցման և հասարակական շինությունների կառուցման աշխատանքներ:

Հասարակական նշանակության և պահեստային շինությունների կառուցման, գոյություն ունեցող շինությունների վերակառուցման աշխատանքային նախագիծը կատարված է համաձայն Երևանի քաղաքապետի կողմից 07.03.2018թ. հաստատված N 01/18-07/2-15025-148 ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող ՀՀ քաղաքաշինական նորմերի և կանոնների:

Նախագծում նախատեսված են հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի կենսագործունեության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ ըստ ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) 'Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար' շինարարական նորմերի պահանջների:

Նախագծով նախատեսվում է՝

- քանդել գոյություն ունեցող չորս հատ մեկ հարկանի շինություններ և մեկ կցակառույց,
- կառուցել երկհարկանի առևտրի սրահ և պահեստային շենք,
- վերակառուցել N1 երկհարկանի մասնաշենքը և N2 պահեստային մասնաշենքը:

N1 երկհարկանի մասնաշենքի /վերակառուցում/՝ նախատեսվում է երկհարկանի մասնաշենքին կից սյունասրահի պարփակում պեմզաբետոնե բլոկներից պատերով,

երկհարկանի մասնաշենքի և սյունասրահի տանիքի իրականացում մետաղական կոնստրուկցիաներով՝ թիթեղյա ծածկույթով, կազմակերպված ջրահեռացմամբ, դռների և պատուհանների տեղադրում և հարդարման աշխատանքներ: Կառույցի ընդհանուր մակերեսը հաշվարկված արտաքին պատերով 470.0 քմ է, իսկ կառուցապատմանը՝ 294.0 քմ:

N2 Պահեստ /վերակառուցում/. նախատեսվում է եզրային ինքնակրող պատերի կառուցում, պատերի երեսպատում, գոյություն ունեցող ծածկի հավաքովի սալերի վրա իրականացնել թիթեղյա ծածկույթով տանիք՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Կառույցի ընդհանուր մակերեսը հաշվարկված արտաքին պատերով (մեկ հարկանի շինության դեպքում նաև կառուցապատման մակերեսը) 373.0 քմ է:

N3 Պահեստ /նախատեսվող/. նախատեսվում է կառուցել մեկ հարկանի կառույց 7960.0 քմ ընդհանուր մակերեսով՝ հաշվարկված արտաքին պատերով (մեկ հարկանի շինության դեպքում կառուցապատման մակերեսը 7960.0 քմ է):

Պահեստը նախագծված է մետաղական կառուցվածքներով և սենդվիչ պանելներով:

N4 Առևտրի սրահ /նախատեսվող/. նախատեսվում է կառուցել երկհարկանի կառույց 3740.0քմ ընդհանուր մակերեսով՝ հաշվարկված արտաքին պատերով:

Կառույցը տեղադրվում է Արտ. Միկոյան փողոցին զուգահեռ հողամասի սահմանագծից 1.5մ հեռավորությամբ, այն իրականացվելու է Ե/բ կառուցվածքներով, իսկ երկրորդ հարկի ծածկը՝ ֆերմաներով և սենդվիչ պանելներով:

Տանիքը միալանջ է՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

Նախագծով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրահեռացում, մասամբ պարսպապատում և հենապատերի կառուցում:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն: Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել թաղանթներով,

Նախնական գնահատման հայտում նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- շինարարության շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:
- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,

- չոր եղանակներին իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում՝ ջրցանման միջոցով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործմանը ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է (ծածկագիր 9120060001000): Քանդվող շինությունների ծավալը կազմում է 490մ^3, իսկ շինարարության ընթացքում գոյացած շինաղբի ծավալը հաշվարկված է 990մ^3: Այն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Օբյեկտի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է ցանցերի միջոցով, ջեռուցումը և սառնամատակարարումը՝ էլեկտրական սարքերով:

<u>Եզրահանգում</u>՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, որի ընթացքում ազդեցությունները թույլատրելի նորմերի սահմաններում են և կրում են ժամանակավոր բնույթ: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են երկու հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները և ազդակիր համայնքը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ>> ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջան Արտ. Միկոյան 18/2 հասցեում նախատեսվող հասարակական շինությունների կառուցման և գոյություն ունեցող շինությունների վերակառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Տնօրենի տեղակալ՝ Ա. Դռնոյան

Մասնագետ՝ Ա. Մինասյան